

Ապրիլի 7-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

05/04/11թ. «Բանանց-2»-«Միկա-2» խաղին «Բանանց-2» թիմի ֆուտբոլիստ Արամ Շախնազարյանի հեռացման (մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակագրկել 1 խաղով, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

Հաշվի առնելով, որ «Միկա», «Բանանց», «Շիրակ», «Գանձասար», «Ուլիս» և «Արարատ» թիմերի կողմից կատարվել է մրցումների անցկացման կանոնակարգի 21-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում, 3-րդ մրցափուլի հանդիպումների տեսագրությունները հաջորդ աշխատանքային օրվա մինչև ժամը 12:00 չեն ներկայացվել ՀՖՖ՝

2.1 «Միկա» ֆուտբոլային ակումբին ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 15-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն տուգանել 10000 դրամ:

2.2 «Բանանց» ֆուտբոլային ակումբին ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 15-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն տուգանել 10000 դրամ:

2.3 «Շիրակ» ֆուտբոլային ակումբին ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 15-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն տուգանել 10000 դրամ:

2.4 «Գանձասար» ֆուտբոլային ակումբին ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 15-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն տուգանել 10000 դրամ:

2.5 «Ուլիս» ֆուտբոլային ակումբին ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 15-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն տուգանել 10000 դրամ:

2.6 «Արարատ» ֆուտբոլային ակումբին ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 15-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն տուգանել 10000 դրամ:

«ՕՀՊՄԲ-95» թիմի առաջնությանը մասնակցելուց հրաժարվելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ Գյումրու ՕՀՊՄ քոլեջին տուգանել 10000 դրամ:

«ԳՖԴ-94» և «ԳՖԴ-98» թիմերի առաջնությաններին մասնակցելուց հրաժարվելու և «ԳՖԴ-97» թիմի լրացուցիչ առաջնությանը մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ Լևոն Իշտոյանի անվան մարզադպրոցին տուգանել 15000 դրամ:

«Շիրակ-96» և «Շիրակ-97» թիմերի առաջնությաններին մասնակցելուց հրաժարվելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ: